ԱՐՄԱՆԻԱ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ ՓԱՐԱՓԱԿԱՆ ԵՒ ԱՅԼՆ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
Պարսկաստանի համար տարեկան 5 ֆր. և կամ 2 բրլ. 50 կ. թղթդրմ.
Ուրիշ ամեն տեղի համար օր այս լրագրի մուտքը արգիլուած չէ, տարեկան բաժնորդագինն է 20 ֆր., վեցամսեայն 10 ֆրանգ և եռամսեայն 5 ֆրանգ։
Բաժնեգիններըը կանխիկ կը վճարուին և Տնօրէնութիւնն ինք կը վճարէ լրագիրը ղրկելու փոստի ծախքը։
Նամակ և ծրար պէտք է ղրկել հետեւեալ հասցէով. M. PORTOUKALIAN, rédacteur du journal *Arménia*. MARSEILLE (France)

Է ՏԱՐԻ ԹԻՒ 29
1891 ՆՈՅԵՄԲԵՐ 25
ՆՈՅԵՄԲԵՐ 13 (Հ. Տ.)
ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ

ԿԸՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ Դ. ԵՐԹ. օրեր

ՊԱՏՄԱՆԵՆԵՐ
Խմբագրութիւնը, եթէ հարկ համարի, համառօտելով և կամ մասամբ միայն կը հրատարակէ իրեն ղրկուած գրութիւնները։
Պարտաւոր չէ վերադարձնել չհրատարակուած ձեռագիրները։
Յանուցումներ կընդունուին հայերէն և ֆրանսերէն լեզուով։
Յանուցման 1 միջակ գիրը 1 սանդիմ կարժէ. 1 գլխագիրը 2 սանդիմ։

Les annonces, en français et en arménien, sont reçues aux bureaux de Rédaction (Allées de Meilhan, 44.)

ՀԱՑՈՑ ՀԱՅՐԵՆԱՍԻՐԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆ

==

ՆՊԱՏԱԿ ԵՒ ՄԻՋՈՑՆԵՐ

(Շարունակ)

«Հայոց Հայրենասիրական Միութեան» նպատակն է աշխատիլ վարչական բարենորոգումներ մտցնելու Թիւրքահայաստանի մէջ, հայ ժողովրդի տեղական պէտքերին համեմատ։ Հայ ժողովրդի ցանկութիւնն է իրաւունք ստանալ ազատօրէն ինքզինք կառավարելու որով միայն պիտի կրնան վերնալ այն հարստահարութիւնները որոնք այսօր Հայաստանի թշուառութեան և աւերակ դառնալուն պատճառ կը լինին։

«Հայոց Հայրենասիրական Միութիւն»ը իւր նպատակ իրագործելու համար իւր կարողութեան չափով կը գործադրէ ամեն յարմար եղած միջոցներն, ժամանակի պահանջներին համեմատ. կաշխատի ներքին այժ պատրաստել Ազգին մէջ իւր պատմութեան համար, հրատարակութիւններ կանէ, դիմումներ կանէ որոց որ պէտք է և նիւթապէս ու բարոյապէս կը քաջալերէ անոնց որոնք անձնուիրութեամբ կաշխատին հայրենիքի պատմութեան գործին։

Միութիւնը կունենայ իրեն բերան եղող լրագիր՝ որ, բացի զանազան լուրեր տալէ իրրեւ լրագիր, կը հաղորդէ ընդհանրութեան ինչ որ Միութիւնը ուզէ հաղորդել, տեղեկութիւններ կուտայ Հայաստանի և տարաբնակ Հայերի դրութեան վրայ և կը ծառայէ հայրենասիրական առանդը արծարծելու Հայերին մէջ։ (*)

Տանօր. «Հայոց Հայրենասիրական Միութեան» անդամակիցել կամ թղթակցել ուզողները պէտք է դիմեն հետեւեալ հասցէին.

M. Portoukalian
(FRANCE) Marseille

(*) «Հայոց Հայրենասիրական Միութիւն»ը կը նպատակէ Արմինիա լրագրի հրատարակմանը։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ռուսաց քաղաքականութիւնը.—Էջմիածնի Սիւնոդի անդամներն.—Հայեր Թիւրքիա.—Հայեր Ամերիկա.— Նոր հրատարակութիւններ. — «Պաշտօնական Թիւրքիան».— Եւրոպայի կացութիւնը.— Յանուցումներ. — Բանասիրական (Տասնեւեօթերորդ դարուն յեղափոխական կեանքից)։

ՌՈՒՍԱՑ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

Ա

Պատմական անտարակուսելի ճշմարտութիւն մ'է, որ ամենայն ազգ հասնելով քաղաքակրթութեան որոշ դաղաթնակէտին, փլուած է, չէ կարողանում յարատեւել։ Դորա պատճառն այն է, որ այդպիսի մի պետութիւն իւր այդ բարձրութեան մէջ ինքզինքն նպատակ է համարում և ըստ սովորում որ ժողովուրդն ալ այդպիսի պետութիւն իւր կենաց միակ նպատակ դարձնէ։ Այդ առաւել վտանգաւոր է լինում երբ պետութիւնը բռնակալական է, վասն զի այդպիսի պետութեան մէջ ոչ թէ մէկ անձ է որ իշխում է իբրեւ բռնակալ, այլ կառավարութեան իւրաքանչիւր մի պաշտօնեայ իւր շրջանում միահեծան իշխող մ'է։

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՏԱՍՆԵՒԵՕԹԵՐՈՐԴ ԴԱՐՈՒՄ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԿԵԱՆՔԻՑ

(Շար. 28ղ թուհ.)

Որոշեալ ժամին բոլորովին անձրեւահար եղած, թրջուած, ջուր դարձած, Աննան եկաւ հասաւ ձորը. երբ ձորի մէջ չգտաւ Մխոյին, իսկոյն մտածեց որ նա անձրեւի պատճառաւ մի քարի տակ մըտած կը լինի, մանաւանդ և շուտով գըտաւ նրան ժայռի տակ մշմշալով սիրուն քնած։ Առաջին անգամ չկարծեց թէ նա քնած է, այլ զարթուն կարծելով մի քիչ հեռուից ասաց. «Կաւեթ չե՞ս խօ որ վախիդ մտել ես ժայռի տակ». բայց երբ տեսաւ որ դեղնած և մաշած երեսը գըրած է չոր քարին վրա և այնպէս անոյշ քնած է, սիրտը յուզուեցաւ և արտասուելով վեր առեց նրա գլուխը ու դրեց՝ առաջ ծնկանը վրա և ապա փափուկ կուրծքին վրա ու ասաց, «Իմ կուրծքս թշնամին արատաւորել է և թէեւ արժանի չէ քեզ համար հանգստավայր լինել, ո՛վ անարատ գլուխ, բայց ի՛նչ անեմ. ալիսի ներես և ընդունես քանի որ սրանից գերազանց տեղ չունեմ. Շատ գերազանց տեղեր կան, փայլուն, փափուկ, բայց քանի որ անպէտ են դէպի իրենց ազգութիւնը և անտարբեր դէպի իրենց ժողովուրդն ոչ մի ժամանակ այնպէս չէ կեղեքուում որպէս այդ դրութեան մէջ։ Սակայն քանի որ բռնակալութիւնը մի միայն տգէտ ազգերի մէջ կարող է յարատեւել, ուստի երբ ժողովրդի աչքը բացուում է, նա աւելի սիրով կը մեռնի, քան թէ բռնակալութեան տակ կըհնձէ։ Ի հարկէ բռնակալութիւնն ալ այդ դրութեան մէջ այլ եւս երկար ճոճել չէ կարող։ Միւս կողմից, նպատակ դարձած պետութիւնն եւս հոգեվարքի մէջ կը լինի, զի այն նպատակն, որ արդէն ձեռք է բերուած, նպատակ չէ և պարտ է տեղի տալ լուսադոյն նպատակի, այսինքն այնպիսի պետական կազմակերպութեան որտեղ ժողովրդի իրաւունքը դերիշխում է։ Մենք այժմ իսկ տեսնում ենք որ եւրոպական սահմանադրական պետութիւնք եւս վտանգի մէջ են, վասն զի այդ սահմանադրութիւններն ալ սիրող անձանց քերի տակ նախապաշարուած են և անտես են առնում ժողովրդի կամքը։ Ուսմի դարուս քաղաքագէտները տեսնելով այդ վտանգը, միակ միջոցը աչքից չվախտացին. այդ միջոցն է որ գործադրեցին Ֆռանսայի հռչակաւոր

տուրք հատատքը, չեն կարող արժանի տեղ լինել քեզ համար։ Տեսնես ինչո՞ւ է սրա գլխի մորթը այսքան թոյլ. — յոգնած գլուխ է. մտածող գլուխ է, հոգատար է. և վասնորոյ ազնիւ գլուխ է։ Երեսիդ մորթը և աչքերիդ բիբերը դեղնած են, ինչո՞ւ կարմիր չէ. — իմ և ինձ նմանների համար զրկուած ես կարմրագոյն և դալկիկ թշերից. ո՛հ։ Մեր եղբայրները, հայ երիտասարդները կարծում են թէ հայուհին թոյլ է, անզգայ է և նրա համար կրօնափոխ է լինում, ֆըրդին է սիրում, ազգ ու հայրենիք է ուրանում. ո՛չ, սխալ է. հայուհին մուսալմանի սրին է հնազանդում, անճար և անտէր է մնում, նրա համար ճուլվում է և միանում. ահաւասիկ եթէ սա (Միխօն) չլինէր, իմ վերջս ի՞նչ պէտք է լինէր. — պէտք էր մի օր սրտանց փոխուէի, ճուլուէի, ոչնչանայի։

Միխօն առաջին անգամ խոր ու քաղցը քնոյ մէջ էր և հէնց էն ժամանակ զարթնեց երբ Աննան ասում էր. «Ահաւասիկ եթէ սա չլինէր, իմ վերջս ի՞նչ պէտք է լինէր...»։ Միխօն իմացաւ թէ ի՛նչ էր ուզում ասել Աննան. և ասաց նրան. «Գալուստդ բարի, ո՛վ հայուհի, Հայոց աղջիկներում գերազանց առաքինի. ես իմ պարտքս կատարեցի, սրբազան պարտք որ անձանօթ է մեր հայ երիտասարդաց, Բայց իմ ընկերներս ինձնից աւելի առաքինի են. Վահրամը մեր

ժողովրդի կայսրները։ Պետութեան խիստ ճոխ ճգնաժամի մէջ նորա սկսան կամ ներքին խռովութեան առաջն առնել, ժողովրդին մէջ տարօրինակ երեւոյթներ յարուցանելով և կամ արտաքին պատերազմ բացին։ Ա.յսպիսի մի օրինակ տալիս է մեզ Նապոլէոն Ա., որ անդադրում պատերազմի մէջ ուղեցաւ իւր գահը պահել։ Բայց այդ չատ չտեւեց, քանզի Ֆրանկներն արդէն քաղաքակրթութեան այն աստիճանին էին հասել, որ այլ եւս միապետութիւն պահել անհնարին էր։

Նոյն վիճակն է և ի Ռուսիա. եթէ Ռուսները դար մը յետ մնացած չլինէին իրենց հարեւանների կրթութիւնից, այսօր չէինք տեսներ այդ բռնակալութիւն, որ տերում է այդ խեղճ ժողովրդի վրայ, թէեւ կարճատեւ ապագայով։

Տարիներ առաջ սպանուեցաւ կայսր Աղեքսանդր Բ. այսպիսի մի դէպք, այդպիսի սարսափելի հարուածով, մինչեւ անգամ Ֆրանսա չէ կատարուել. կայսեր ոտերը և փոր ու աղիքը կարուել այրուել էին գնտակի ահեղ բոցի մէջ և միայն մէկ կէսը տարուեցաւ ապարանքը։ Պէտք է տեսած լի-

---

տերիմ է, աղնիւ է և վախկոտ. իսկ Ագոմը խնամտուն է և հաւատարիմ. Մկլօն անփորձ է և քաջ. միւսներն էլ ազգիս հաւատարիմ զաւակներն են։ Վարդանն մեր ամենից քաջն էր և նրա համար մեր ամենից չուտ նահատակուեց և ննջեց Հեր քաղաքում (Սալմաստի հին քաղաքում)։ Օրհնուի մեր ազգը, նրա գերեզմանը սըրբատաշ քարերով պարսպեց և գերեզմանի վրան տաճար չինեց։ Վարդանը, իմ աչերս, մեզ պէս չէր. նա չէր սիրում ծածուկ գործել. հրապարակաւ անվախ և համարձակ յարձակուեց բարբարոս Հէյտար պէկի զօրագնդին վրա որի մէջն գտնվում էր բռնաբարուած Վառվառն (այժմ գերեզմանը Սալմաստումն է)։ Նրա անունն Վառվառ չէր բայց երբ տեսաւ Վարդանի սպանուելը, իսկոյն ինքն էլ իրեն ձգեց մի վառուած խարոյկի մէջ և այրուեց. նա իւր սուրը հաւատում վառ էր և որովհետեւ խարոյկում էլ վառուեց, վասնորոյ նրա անունը մնաց Վառ-վառ. այսինքն երկու անգամ վառուող։ Վարդանի որդի պատանի Սարգիսի մասին ոչինչ չգիտենք. նա իւր հօր հետ ձի հեծաւ գնաց, նա հասակաւ փոքր էր բայց միտքով ու ուժով չատ մեծ. գուցէ նա էլ իւր հօր հետ կամ իւր հօրիցը յետոյ նահատակուած լինի. նա այնպէս մէկը չէր որ միանար և ճուլուէր մուսուլմանաց հետ։ Ափսո՛ս որ մէկ էլ չտեսայ նրան այս կեանքում. նա ինձ հետ հա-

նել, հասկանալու համար, թէ ի՞նչ այժ է ժողովուրդը որ այդպիսի սուրբ գործից չէ խորշում և ամենաախտ հարուածի է ենթարկում իր կամքը բռնաբարողին։

Այժմեան կայսրը դողի մէջ է։ Իրաւ, ի՞նչ կեանք է այն կեանքը, երբ կայսր լինելով հանդերձ, աւելի քիչ ապահովութիւն ունի, քան իւր վերջին ճորտն անգամ։ Ինչպէս մի Ռուս Անգլիայում գրում էր, կայսրը գիշերները սաստիկ չփոթուած դրութեան մէջ է ընկնում, երբ իւր հօր պատկերը ներկայանում է իրեն։ Այսօր նա կառավարութեան չէ խառնւում և ամբողջ գործը որեւէ Պօբեդոնոսցեվի ձեռումն է։

Բայց պէտք է ապահովուել։ Ասում էին որ կայսրը հրաժարւում էր գահ բարձրանալուց և միայն կառավարչականների երդումն, որ ամենայն ինչ պիտի ապահովեն, նորան համեղից։ Այդ ապահովութիւնը միայն մէկ միջոց ունի և այդ այն է որ արդէն Նապօլէոնները գործադրել են. արատքին կամ ներքին պատերազմ։ Եւ ահա Պօբեդոնոսցեվ, Դօբրուչով հայլէ այդ երկու միջոցներ միաժամանակ գործ ածել չանացին՝ ժողովրդին ոչ միայն ղբաղեցնելու համար, այլ և մխրճանպատելու, մոլեգնեցնելու օտարների դէմ. այնպէս մոլեգնեցնելու որ իրենց երջանկութիւնն իսկ դորա մէջ գտնեն, մոռանան մարդկային ամենայն ձգտումներ և կարծեն թէ կառավարութիւնը չանում է ժողովրդի բարօրութիւնը առաջ տանել. տեսնեն բռնակալի ուժը օտար ազգերի դէմ և երկիւղածութեամբ վառուեն և կամ այլոց թշուառութեամբ զուարճանան։ Ի հարկէ այդ միջոցը չէ կարող երկար տեւել, սակայն ո՞վ է հեռու ապագային նայում. դեռ մօտաւոր հոգսերն միայն կարող են Ռուսին զբաղեցնել։

սակակից և մտերիմ էր, չտեսայ նրան. բայց հիմա գնում եմ տեսնել։ Աննա՛, աղնիւ քո՛յրս, հոգ չանես. սիրտդ չը փոխես, ուղիղ կը գնաս *** գիւղը Արգովիս մօտ. ես քեզ յանձնում եմ նրան, ասա՛ նրան և բոլորին որ էլ Միխայլին չէք տեսնելու. բայց եթէ չատ էք սիրում ինձ և ձեր ննջած ընկերներին, աշխատեցէք չուտ հասնել մեզ. ես գնում եմ մեր հայրերի սուրբ ճանապարհով։ Աննա՛, աղնիւ Հայի՛ աղջիկ, դու քեզ չընտսես. ինձ կը թաղես այտեղ, ժայռի տակը. դաշտնի վերջը չատ խորն էր անցել, սիրտս վնասուած էր, անդարմանի մտայի. ա՛խ, թո՛ղ տուր գլուխս, ուղիղ դիր, դարձո՛ւր դէպի մեր նախնեաց Ս. աղօթարան. իմ իսկական անունս է Ղազարմնաք բարեաւ, ընկերնե՛րս, մնաս բարեաւ, Աննա՛, չուտ հասնես Արգովին. ընդունի՛ր իմ հոգիս, Տէ՛ր ցնծութս։ — Աւանդեց հոգին։

Երբ Միխօն խօսում էր և իւր վերջին բաժանման բարեւներն էր տալիս, մի բան Աննայի լեզուն փակեց, երբէք միջոց չտուեց որ խօսի. այդ հեղեղի պէս թափվող արտասուքն էր որ խեղդեց նրան և փակեց լեզուն։ Աննան չարունակ սրբում էր աչքերը և նայում Միխայլի դեղնած և մաշուած երեսին. նա չէր ուզում իւր լացով մեծ մեծ և սեւ սեւ աչքերը կարել նրա դեղնած և թառամած աչքերից, ինչպէս որ չուզեց Միխայլի գլուխը իւր կրծքից հեռացնել.

Բ

Այդ է Ռուսաստանը կառավարողների վերջին միջոցն, որպէս առիթ ունեցայ, երկար ժամանակ պատերազմական ապրելով, լսնանալ հեղինակաւոր անձինքներից։ Նախ պատերազմի ճանապարհ բացին անդրկասպեան երկրում, յետոյ Հրեաներին հալածեցին ժողովրդի աչքին վայր վչելու համար, ապա սկսան Ֆիննեերին և Գերմանացիներին հալածել և այդ այն աստիճանի հասցրին որ նոքերս հրամայեցին պրօտեստանտ քահանային իւրեանց եկեղեցում աղօթել և դադարել Աստուածանից, որ մեկ Գերմանացի դարձել էր ռուսաստան. ընդդիմադրողին աքսորելին Սիբիր։ Այժմ եւ նոր հրաման ելաւ, որով պիտի դադրա ստիպուէն եկող տարւանից բոլոր եկեղեցական դրքերը (խակ աղօթքը՞) ռուսերէն դրել, որպիսի խժդժութիւն դեռ ոչ մի տեղ չէ եղել։ Արդէնեցին Գերմանացի եպիսկոպոսարդներին Գերմանիա դնալ, դինուորական ծառայութիւն վերջացնել և դառնալ, այլ և գերմաններէն աղդային երդեր երդել ասլին։ Քիչ է մնում որ ստիպեն գերմաններէն ամենեւին չխօսել։ Օրէցօր խոսանում են այս հալածանքները, որոնք նշանակ ու գուշակ են պետութեան խախուտ դրութեան։

Այս հալածանքը հիւսիսից էին սկսել, ըստ որում կամաց կամաց տանում են դէպի հարաւ։ Քանի ժամանակ առաջ Էջմիածինը չատ այցելուներ ունէր կառավարութիւնից։ Թէ՛ կառավարչական և թէ՛ եկեղեցական անձինք գնացին և տեսան Հայոց սրբաքայրը, կամենալով անձամբ ստուգել հալածանքի կարելիութիւնը։ Արին և մտեր փորձեր և հարցեր, այնպէս որ Գիլոսը մինչեւ անգամ աղաչեցել կաթողիկոսին եկեղեցական

Աննան անլեզու, արտասուելով, ասում էր իւր սրտում. «Չեմ փոխի քո գլխատեղը. քանի որ Հայաստան փափուկ կուրծքը կայ քեզ մօտ, էլ ինչո՞ւ սեւ և կոշտ քարերի վրա ատանդես հոգիդ»։ Երբ Միխօն հոգին աւանդեց, Աննան մի քանի րոպէ մարած ընկաւ գետնի վրան և ապա ուշքի գալով ասաց. «Տէր իմ և Աստուած իմ, գոնէ ինձ խնայէիր, ինձ անտէր չթողնէիր. բայց իմ սէրս դուն ես. դու քո սիրած անձն տանում ես. դու խղճացիր սրա վրա և չթողիր որ երկար նեղութիւններ քաշէր. բայց ի՛նձ, ո՞ւր երթամ ես հիմա, մնացի մենակ. Տէ՛ր, առաջնորդէ ինձ մինչեւ հասնեմ մի տեղ, Արգովի մօտ։ Ի՞նչ անեմ այս դիակը, Ղազարոս մարմինը. սխալ ինչո՞ւ ննջեցա. արիւնը ցամքած է, բոլորովին չորցած է։ Ջահանայ չկայ, ո՞վ պիտի թաղէ սրան. ո՞ւր է քո ծնողդ կամ ո՞վ կայ որ քո դիակիդ վրա ողբայ. այս ամենի համար միայն ես եմ մնացել. իմ մեղքս չատ է, պէտք է ես կրեմ. երանի՛ թէ Տէրս այս ամենը իմ մեղացս քաւութիւն համարէր. ա՛հ, պատճառ եղայ մի անմեղի մեռնելու. իմ սէրս սպանեց. ես սպանեցի քեզ, եղբա՛յրս Ղազար. էլ ի՛նչ ասեմ, մնաս բարեաւ. հանդչիր դու աստ. հեռանում եմ քեզանից, բայց սչ սրտով. տանում եմ քեզ իմ սրտիս մէջ։ Ելաւ տաքի որ դնայ բայց ընկաւ մարած։

(Շարունակելի)

ԱՆՆԻԲԱԼ

մութեան անհերքելի սրբապղծութիւն, որի դէմ պարտ է նաեւ Թիւրքիայի և այլ տեղերի հայութիւնը բողոքել։

ՕՆԱՆԴՐ

ԷՋՄԻԱԾՆԻ ՍԻՆՕԴԻ ԱՆԴԱՄՆԵՐը

Թիֆլիզի լրագիրները Ռուս. Պաշտօնական Թերթէն կարտատպեն հետեւեալ երկու հրամանները, որոնց առաջինը կը վերաբերի աքսորուած եպիսկոպոսների գործին.

Թագաւոր Կայսրը սեպտեմբերի 19ին, ներկայ 1891 թ., Բարձրագոյն հրամայել բարեհաճեց, Էջմիածնի հայ-լուսաւորչական սինոդի անդամներին, Սուքիաս եպիսկոպոսպարզեանին, որը միեւնոյն ժամանակ փոխանորդ է Երեւանեան թեմի, և Ներսէս եպիսկոպոս Խուդավերդեանցին, — արձակել իրանց բոլոր պաշտօններից։

— Թագաւոր Կայսրը ներքին գործերի մինիստրի ամենահպատակ զեկուցման հիման վրա, սեպտեմբերի 19ին ներկայ 1891 թ., Բարձրագոյն հրամայել բարեհաճեց՝ հաստատել հայ-լուսաւորչական եպիսկոպոսներին, Աբիսաակէս Սեդրակեանին, Գրիգորիս Ազատեանեանին և Բարթուղիմէոս վարդապետգէորգեանին,—Էջմիածնի հայ-լուսաւորչական սինոդի անդամներ։

Կաւկազ լրագրի մէջ ալ հրատարակուած է հետեւեալը.

Բարձրագոյն հրամանով, որ կայացաւ սեպտեմբերի 19ին, հայ-լուսաւորչական Սինոդի անդամները, Սուքիաս Պարզեանց և Ներսէս Խուդավերդեանց եպիսկոպոսները, իրանց պաշօնների գործադրութիւնների համար Սինոդի անդամների պաշտօնում, արձակված են իրանց բոլոր պաշտօններից և հեռացրած են՝ մինը Օրլովսկոյ, իսկ երկրորդը Պոլտավսկայա նահանգը։ Միեւնոյն ժամանակ հրամայված է Էջմիածնի Սինոդի անդամների թափուր մնացած տեղերը նոր անդամներով լրացնելուց յետոյ, պարատաւորացնել Սինոդը վերաքննել այն բոլոր գործերը, որոց վերաբերմամբ կայացած են պաշօնների վճիռները, ունք և պատճառ ունան Սինոդի պրօկուրօրի արած բողոքների։

ՀԱՅԵՐ Ի ԹԻՒՐՔԻԱ

Քաղուածներ Կ. Պոլսի լրագիրներէ։

Արաբկիրցի մի խումբ հայրենակիցներ որոնց հետ նաեւ Մայր եկեղեցու լուսարարն և երկու ժամկոչներ որոնք սպանութեան գործի մէջ մեղսակցութիւն կամ տեղեկութիւն ունենալու ամբաստանութիւնով երկար տանել ի վեր բանտարկուած էին այնտեղ, Տիգրանակերտէն եկած մի հեռագրի հանձայն անպատճառ արձակուել են խմբովին։

—Խարբերդէն կը գրեն մեզ թէ հոկտ. 10/22ին այնտեղ վախճաներ է Տ. Մեսրոպ ուսուցչապետ քահանայ Էջմիածնեան։ Հանգուցեալը իր կեանքի մեծ մասը ուսուցչական ասպարիզին նուիրած էր և իբր պատճառանաչ քահանայ մեծ համակրանք կը վայելէր ի Խարբերդ. փոխ-Առաջնորդութեան պաշտօնները ալ վարած է։ Թաղումը

մեծ շքով կատարուեր է և մասմինն եկեղեցու գաւթի մէջ ամփոփուած է ժողովրդի վախագին հառաչանքն ։

—Կրօնական ժողովը որոշեր է ասկէ ետք մերժել խնդիրները այն օտարազգեան անձերի որոնք Աղգային Պատրիարքարանի իրաւասութեան ներքև մնալու համար կը դիմեն երէն և որոնց նպատակն է ամուսնանալ հայ կնոջ մը կամ հայ մարդու մը հետ։ Այս արդիլքի պատճառն այն եղած է որ այդ օտարազգեան անձեր այդ արտօնութիւնով Հայու մը հետ ամուսնանալէ ետք, իրենց նախապէս պատկանած հոգևոր իշխանութեան հրամանով այդ ամուսնին կը թողուն և ուրիշի հետ կամուսնանան, որով անպատեհութիւններ և լքուած ամուսինների կողմէն բողոքներ կը պատահին ։

ՀԱՅԵՐ ՑԱՄԵՐԻԿԱ

Նիւ Եորքի Ազատութիւն լրագրի մէջ հետեւեալները կը կարդանք .

Տ. Մկրտիչ Շէշմանեան , լրագրոյս արուեստագէտ պճագրիչը , բաւական ճանչցուած է իւր արհեստին մէջ ։ Սորա գծագրած շատ մը պատկերներն հրատարակուած են տեղական լրագրաց շատերու , ինչպէս «Թրիպիւնի», «Թայմզ»ի , «Փրէս»ի և այլոց մէջ շատ անգամ։

— Ռաթըըի հայ գաղթականութիւնն իւր առաջնորդներով հայրենիք դրկեց երկու Հիւսէյնիկցի հիւանդ Հայեր որք անկարող էին գործել ։ Սոցա անուններն էին Վարդան Սուքիասեան , Կարապետ Յակոբեան . թէ՛ երկու ննջեցելոց թաղման և թէ՛ յիշեալ երկու Հիւսէյնիկցի Հայոց ծախքերուն համար հանգանակուած է երէք շաբաթի մէջ 224 տոլար և ծախք եղած է 129 տոլար առջի ճամբորդներուն , և 70 տոլար վերջի ճամբորդներուն համար ։

— Հոկտ. 17ին քաղաքէս հինգ Հայեր , ձանձրացած լինելով գործատուբական կեանքէ , մեկնեցան դէպի Հայրենիք ։

—Հոկտ. 10ին 14 հայ գաղթականներ եկան հայրենիքէն Ռաթըը դարնալու համար ։ ասոնց մէջ կային նաեւ չորս մահմետականներ որք հայերէն լեզուի ծանօթի լինելով ի սկզբան չանացին իրենց տգիտութիւնն ուրանալ՝ Հայերէ նեղութիւն չի կրելու համար ։

— Հիւսիսային և Հարաւային Ամերիկայի մէջ կան իրը 160,000 Աւորիներ (1) այլ և այլ գաւառակարգէ . ասոնց առաւարագոյն մասը ազգատ դասը կը կազմէ . կան իրենց մէջ վաճառականներ և դրագէտներ ալ ։ Այժմ ասոնց իրենց առաջին լրագիրը պիտի հիմնեն Ամերիկեան Ատող (Քաւքասոյ Ամերիկա) անունով ։ Քաւքասոյն դվեսաւորացէս պիտի պաշտպանէ Արեւելեան ազգերն որով և Հայոց շահերն յԱմերիկա ։ Թերթը քաղաքական խնդիրներով չզբաղի ։

(1) Այս Աւորիք խիստ մեծ մասով Լիբանանի Լեռնականոյ կողմերէ գաղթեալ Մարոնիներ և Սիրիացիները են . խիստ քիչ կան իրենց մէջ Հայաստանէն գնացողները որոնք Աւորի անունով կը ճանչցուին ։ Ծ . Խ .

Թերթին դրաշարութեան և տպագրութեան հոգերն պիտի յանձնուին Հապիլ Էֆէնտի Փէթրաքեան անուն հայ երիտասարդի մը որ երկար տարիներ ի վեր Ծուրկայ մէջ կեցած լինելով՝ քաջահմուտ է արաբական լեզուին ։

Նոր հրատարակութիւններ

Լոյս տեսաւ և վաճառվում է արդէն Վ. Փափազեանի « Պատկերներ Թիւրքահայոց կեանքից » գրքոյկը , որը պարունակում է իւր մէջ հեղինակի տասնեւմէկ հատ ամենաընտիր վէպիկները ։

Գիրքը բաղկացած է մօտ 350 երեսից . տպուած է մաքուր թղթի վրայ Մոսկվայում ։

Կարելի է առնել Արմենիայի խըմբագրատունէն , դրկելով 4 ֆրանք ։ Փոստի ծախքը կը վճարուի խմբագրատունէն ։

Նոյնտեղ կը ծախուին նաեւ միեւնոյն հեղինակի գրած և Պր. Աբել Ապրէսեանի հրատարակած « Ճգնաւոր Եղո» անունով պատկերը Թիւրքահայերի կեանքից ։ Գինն է 35 սանթիմ։ « Խաթ-Սաբահ»՝ 55սանթիմ։ Պ. Շերվանզատէի գրած և Պ. Ապրէսեանի հրատարակած « Գործակատարի յիշատակարանից. Մի պատկեր վաճառականական կեանքից». գինն 1 ֆր. 75 սանթիմ։ Ղրկելու փոստի ծախքը կը վճարուի Արմենիայի խմբագրատունէն ։

«ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ԹԻՒՐՔԻԱՆ»

(Շար. 28րդ թուհն եւ վերջ)

Հեղինակը գրքին մէկ ամբողջ գլուխը տուած է Սուլթան Համիտի քաղաքական և բարոյական նկարագիրն հանելու և այդ մասին հետեւեալները կը գրէ .

«Սուլթան Համիտի խառնուածքը մաղձային և ջղային է , իւր դիմագիծը հայ-արաբական է քան թէ թրքական, աւելի կը նմանի արեւելքի գնչուների տիպին ։ Մելամաղձոտութիւնն միացած ջղական զգայնութեան և մէջ ընդ մէջ պատահած խենթութեան հետ , անոր խառնուածքին մէջ տիրապետող տարրը եղած է ։ Զուր անձկութիւններ , երեւակայական վախեր , ուղեղային տպաւորներ որոնք իր շրջապատի մարդիկ խնամով կը ջանան աւելի զրդռել , ահա այն կազմական պակասութիւնները որք քաղաքին և մեծութեան բնազդումն իր մէջէն կը ջնջեն , կը հանեն . այդ է պատճառ որ իր գործերի , հրամաններուն մէջ մի կապ չկայ . իր պալատականներ և սիրելիներն ալ յաճախ կը փոփոխէ որոնք չատ անդամ տաքտրտած և դարձեալ ետ կանչուած են ։ Իր մէկ շատ սիրելի չերքէզ թիկնապահն Ս. պէյ , ուժերբորդ անգամն է որ տքտրէ ետ կը դառնայ ։ Սուլթան Համիտ մեծ թախանձկութիւն ունի , սակայն վախկոտ մ'է։ Ձակատագրի վրայ մեծ հաւատք ունի և այս կրճտական մելամաղձոտ ղգացում յայտնի կերպիւ իր մեծ չարժուձիների մէջ ։ Կատաղութիւնը ծայրայեղութեան կը հասնի . դանձ դիպելու առնչը և առատաձեռն լինելու փափաքը կը մրցին իր մէջ ։ Աչխատասէր է , սուր ըմբռնում ունի , ատրինէ և պատերազմէ կը խորշի ։

«Կանոնոյի էնթրիկներին և իր բռնական կասկածոտութեան պատճառով Սուլթան Համիտ երբեմն երբեմն մեղամաղձութեան տագնապներ կունենայ . այդ պարագայներին մէջ հոգեկան թմրութենէ , յուսահատութենէ ընկճուած՝ կանանոցը կը քաշուի , ոչ ոքի երեսը տեսնել կուզէ , նոյն իսկ նախարարները իր ներկայութեան չընդունիր . այդ տագնապներն ժամնակ որոնք երբեմն 2–3 օր , մինչեւ իսկ ութ օր կը տեւեն , պետութեան անիւը կանգ կառնէ . ոչ մէկ երեսէ կը հանուի , նախարարներն իրենց բոլոր ուրոշումներն կը սպասեն վաւերացումի։ Տագնապը վերջանալէ ետք , Սուլթանը իր սովորական կեանքին կը վերադառնայ , աւելի պայծառ մտքով , աւելի գործունեայ և աւելի աչխատասէր ։»

Հեղինակը յայնմէտ մի գլխի մէջ խօսելով Թիւրքիոյ ամենազօրեղ իշխանի — Սուլթան Պաքչէի (կաշառք) մասին , մի քանի մանրամասնութիւններ կը յիշէ որոնք կը ցուցնեն թէ Թիւրք նախարարներն և պալատականներն ո՞րքան միլիոններ կուլ կուտան հանրային չինուածքի և կամ ընդհակառակն եղած գնումներուն գործերին մէջ ։ Հանրային չինուածքի մի թիւրք նահանգ , Հասան Ֆէհմի վազա, 160 միլիոն ֆրանք վերուցեր է գանձէն որով Մուտանիային ի Պրուսա երկաթուղի մը պիտի չինուի . այդ 160 քիլոմէդրանոց երկաթուղու երկաթէ գիծերը միայն գնեղուելեան , յետոյ ամեն բան մնացուածք. գիծերը անձրեւի ձիւնի տակ ձգացին , փտեցան , այսօր տեղ տեղ պերճնք ծածկող հողի տակէն որգնոտած փայտերի պէս կերեւին ։ Խոշոր գումարներով Քրուբի պինդապրծարաններէն թնդանօթներ բերուած են վերջերս . ապտնցմէ 6 խոշոր և 300 հատ ալ փոքր թնդանօթներ այժմ երեսի վրայ ձգուած կը մնան ձիւնի, անձրեւի տակ և կը փտին. կաշառքը միայն թեպետ ծած եր թիւրք նախարարներին այդհրաշէններ գնել։

Հեղինակը 4000ի կը հասցունէ Եըլտըզի Պալատին մէջ ապրող կիներ , պալատականներ , ծառայների թիւը , և Սուլթանի անձնական ծախքը 150 միլիոն ֆրանք կը հաշուէ , որմէ 30 միլիոնը խոհանոցի ծախքն է . պարգեւների գումարն՝ ալ 35 միլիոնի կը հասնի ։ Սակայն Սուլթանի տարեկան ռաճիկը զոր կըստանայ պետական գանձէն , 25 միլիոն որոշուած է ։ Այդ, իր անձնական ահագին ծախքին բացը գոցելու համար Սուլթանը բացի իր 1500 պատրաստներէ հասցթէն , երկրի այլ և այլ տուրքերէն ալ առանձին բաժին կը ստանայ և մանաւանդ խալիֆայութեան իրաւունքովն ահէ ժամանակ կրնայ պետական հազթներէն վրայ ձեռք դնել ։ Իրրեւ մի փոքր օրինակ թէ չապլուխնն ի՞նչ կերպով ի գործ կը դրուի Պալատին մէջ , հեղինակը կը պատմէ որ մեկ աչքով տեսած է թէ ի՞նչպէս մի օր մէկ ամբողջ անասուն մամ (եւրոպական լաւագոյն գործարանի) արուեստական վերջոյքներ , իրը մէկ շաբաթուան վաճառու մամ. թէև երեք կապոց կը բաւէր իրենց , բայց մատակարարը չէ ուզեր նեղութիւն կրել անասունը բանալու։ Այսպէս ալ կը կատարուին ուրիշ բաշխումներն ։

Սուլթանի հարէմը որ կը դանուի Վալիսէ-Սուլթանի կառավարութեան տակ , մօտիկ 1500 Սուլթանուհիները , սեռնեկապանուհիները , սպասուհիները նաեւ գերուհիները կը պարունակէ ։ Սուլթանի ամեն մէկ կնիկը կամ չչխանուհիներն ունին 8–12 պաշտօնեուհիներ որոնք իրենց կարգին ունին իւրաքանչիւրը 6–10 աշկերտուհիներ. այդ պաշտօնեուհիներն են. մէկ առաջին դանձապետ , մէկ առաջին քարտուղար , մէկ առաջին կնքապահ , մէկ առաջին սենեկապան, մէկ առաջին մատուցանող ջուրի, մէկ առաջին մատուցանող սուրճի, մէկ առաջին մատակարար հայլն հայլն ։

Հեղինակն ուրիշ մի գլխի մէջ կը խօսի Սուլթան Աղիզի սպանութիւնէ , Սուլթան Մուրատի բռնի գահընկեցութեան պարագայներուն վրայ. խիստ կերպով կը քննադատէ վերանորոգիչ կարծուած Միհհաթ փաշան որ իր փառասիրութեան համար Մուրատը գահընկեց ընել տուաւ և իրրեւ յիմնարացած հրատարակեց զայն , թէեւ նա տակաւին իր ուղեղի առողջութիւնը կը պահէ եղեր ։ Հեղինակին կարծիքով , Մուրատ որ արդէն յառակսէս դատախարակուած էր իրր ապազայ դահաժառանգ, աւելի լաւ կրնար վարել Թիւրքիոյ կառավարութիւնը քան ներկայ Սուլթանը որի կրթութեան մասին հոգ չէր տարուած և որ իր երիտասարդութիւն փաշաների ցոփ դաւակների հետ և կեանքի հասուն տարիքն ալ , մտքի և ճաշակի յանկարծական չըլմամբ , մոլութեանց մէջ անցուցած է ։

ԵՒՐՈՊԱՅԻ ԿԱՑՈՒԹԻՒՆԸ

Վիէննայի Քորէսբոնտանս Բոլիթիքը որի յօդուածները Եւրոպայի դանազան տերութիւններուն դիւանագիտական աղբիւրներէ կ'հաղորդուին, հետեւեալ դրութիւնը հրատարակած է ։

«Վերջին երեք քաղաքական մեծ ցոյցերը , Ֆրանսուա Ժոզէֆ կայսեր ճառը, ինչպէս նաեւ Իտալիայի ու Անգլիայի պետական անձերի բանախօսութիւնները ուշադրութեամբ դիտուած և կարդացուեցան , բայց մի նոր տպաւորութիւն չազդեցին և կացութիւնը խնդացի և պետական մի մարդու պէս վարուելու՝ չափազանց լատատեսութիւն չներշնչելով ։ Լորտ Սալիսպըրիի ճառին մէջ աւելին աչքի զարնող կէտը այն հատուածն է որ կը ցուցնէ թէ նախարարական մի փոփոխութիւն չկրնար Եգիպտոսի խնդրին մէջ Անգլիան ունեցած քաղաքականութիւնը փոխել ։ Մարդիկ որ Ռիւսիոնին ալ այն միտք յայտնեց թէ խոտվան իր ունեցած ներկայ աչխարհակալութեան հատատարիմ պիտի մնայ ։ Քաղաքական ներկայ դրութիւնը ծանուցանող տուաւ այդ ճառերի և մտիկ ապագայի մէջ աւելի բարձր անձնաւորութիւններ ալ պիտի խօսին նման ճա-

ուեր ։ Եւրոպաի կացութիւնը երբեք այժմեան աւելի յստակ եղած չէ. հիմա կը տեսնուին մէկ կողմը երեք տէրութիւններ Ալմանիա, Աւստրիա և Իտալիա որոնք գործերի ներկայ վիճակը կուզեն պահպանել և միւս կողմն ալ Ֆրանսան որ Ալզաս-Լորէնի գրաւումը երբ ապօրինի նկատելով, Եւրոպաի խաղաղութեանը կ'սպառնայ և կը կարծէ թէ Ռուսիան իրեն ապահով մի դաշնակից է Եւրոպաի մէջ ներկայ կացութիւնը հինն ի վեր փոփոխելու համար ։ Դիտելի է որ քաղաքական շրջանակներէն մէջ Ռուսիաի ահռելի սոճը երբեւ խաղաղութեան մի երաշխիք կը նկատուի ։ Գալով Անգլիաի, նա իր աշխարհագրական երջանիկ դիրքին շնորհով, կարող է իր չեզոքութիւն պահպանել մինչեւ վերջին վայրկեան և իր միջամտութիւն անկախօրէն ի գործ դնել ապագայ կռիւներէ մէջ ։ »

Ֆիկարօն այս գրութենէն այն եզրակացութիւն առաջ կը բերէ թէ յօդուածին վերջին մասը յայտնի կը ցուցնէ թէ Անգլիան երբեակ Դաշնակցութեան հետ կապելու համար երած չանքերը անօգուտ եղած են ։

ՄԱՆՈՒՑՈՒՄՆԵՐ

« ԱՐԱՔՍ » Ի

ԲԱՑՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ

«ԱՐԱՔՍ» ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ԳԵՂԱՐՒԵՍՏԱԿԱՆ ՊԱԿԵՐԱԶԱՐԴ ՀԱՆԴԷՍԸ 1892 ԹՒԱԿԱՆԻՆ Հրատարակուելու է կանոնաւորապէս Ապրիլ և Դեկտեմբեր ամիսներու սկիզբներուն ։

1891 թուականը լրանալու վերայ լինելով, «Արաքս»ը այլ եւս այս տարի հրատարակուելու չէ. ուստի այժմ բացուած է «Արաքս»ի 1892 տարեշրջանի բաժանորդագրութիւնը ։

Տարեկան (2 դրքի) բաժանորդագինն է 3 ռուբլի ռուսական կամ 4 Ֆլորին աւստրիական ։

Այս տարուան համար արդէն բաժորագրողներին կուզարկուի հանդէսը 1892 տարեշրջանին ։

Փորձը ցոյց է տալիս, որ դանդաղ և անժամանակ բաժանորդագրութիւնը միասում է հանդիսի կանոնաւոր հրատարակութեանը. ուստի բաժանորդ դրուողներին խնդրում ենք ըշտապելու, որպէս զի մենք էլ օր առաջ տեսնենք մեր պատրաստութիւնը ժամանակին հրատարակելու ։

1892 թ. առաջին դրքի գեղարուեստական բաժնի մէջ մտնելու է «Պատմութիւն և նկարագրութիւն հայկական ճարտարապետութեան, նըկարներով հանդերձ» ։

«Արաքս»ի չափկի-երեսի նկարը փոփոխութիւն է կրելու, նկարները այսուհետեւ տպուելու են աւելի գեղարուեստական նրբութեամբ և անհամեմատ գերազանց թղթի վերայ և թէ նկարները մեծ մասամբ լինելու են դուռնաւոր ։

Երբ բաժանորդագրութիւնը յաչող ընթացք մինչև յուռնուար ամիսը, այն ժամանակ, ի նկատի ունենալով մի քանի հանգամանքներ, 1892 տարուան գրքերը կը հրատարակենք մինը միւսից յետոյ մինչեւ ապրիլի սկիզբները ։

Բաժանորդ դրուողները և «Արաքսի հետ գործ ունեցողները դիմելու են մեզ միշտ այս ապահով հասցէով.

Siméon Goulamiriantz
S. Pétersbourg

Հետեւեալ գիրքերն կարելի է ստանալ Ամերիկաի խմբագրատունէն, իրենց առջեւ նշանակուած գիներով և փոստի ծախքը խմբագրատունէն վճարուելով ։

Աւժէքը կանխիկ չվճարուած՝ գիրք չղրկուիր ։

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ Մ. ՓՈՐԹՈՒԳԱԼԵԱՆԻ

Ա. ՀԱՅ ԴԻՒՑԱԶՆՈՒՀԻ ՄՐ (Սպառած)։
Բ. ՀԱՅ ԳԻՒՂԱՅԻ »
Գ. ՍԱՂՄՈՍ ԻՍՐԱՑԷԼԻ »
Դ. ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ՊՈՒԼՂԱՐԻՈՅ ԵՒ ԿԵՆՍԱԳՐՈՒԹԻՒՆՔ ՊՈՒԼՂԱՐ ԱՊՍՏԱՄԲԱՊԵՏԱՑ (Պուլղար աղգին իր ազատութիւն ձեռք բերելու համար մէկ դարէ ի վեր արած չանքերի խիստ հետաքրքրաշարժ նկարագրութիւնն է։) (1 ֆր. 10 սնթմ.) 1 ֆր. 50 սթմ.
Ե. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԹՇՈՒԱՌՆԵՐԸ.—(Հայաստանցիներուն պանդխտութեան տխուր հետեւանքներէն մէկ փոքրիկ պատկերը կը ներկայացնէ վիպական կերպով։) Գինն (90 սնթմ.) 1 ֆրանգ 20 սնթմ.
Զ. ԳԱՄԱՌ ՔԱԹԻՊԱ — ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԸՆԹԵՐՑԱՐԱՆ յետ այբուբենաց առարտեղ (Մեծանուն հայ բանաստեղծին վերջերս գրած ազատաշունչ ընտիր ոտանաւորներէն 3ը՝ առանձին տետրակով հրատարակուած են)։ 50 հատը 2 ֆր. և 50 սանթիմ, հատը (5 սնթմ.) 10 սանթիմ։
Է. ԼԻՆԶԻ ՕՐԷՆԻՐ ՏԱՃԿԱՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ. (Սպառած)
Ը. ԹԻՒՐՔԻԱԻ ՀԱՅԵՐՆ ԵՒ ԻՐԵՆՑ ԴՐԱՑԻՆԵՐ (Թիւրքիաի Հայերին և իրենց դրացի ազգերի վրայ վիճակագրական և ցեղաբանական ամփոփ և հետաքրքրաշարժ տեղեկութիւններ կը պարունակէ։ Թիւրքահայաստանի մէջ բնակող այլ և այլ ազգերէ բնակիչներուն թիւին բազդատական մէկ ցուցակն ալ կցուած է տետրակին վերջը։) Գինն 50 սանթիմ (35 սանթիմ)։
Թ. «ԱՐՄԷՆԻԱ»Ի ՅՈՒՇԱՐԱՐ (Ամերիկաի Ա տարեշրջանի թիւերը այժմ բոլորովին սպառած և միեւնոյն ժամանակ շատերի հետաքրքրութեան առարկայ դարձած լինելով, այդ շրջանի մէջ Մ. Փորթուգալեանի գրած առաջնորդող յօդուածները դէթ 30ի չափ ամփոփուած են Ցուշարարի մէջ որ ութ տարի դիրքով 124 երեսներէ կը բաղկանայ)։ (1 ֆրանք)։ 1 ֆր. 40 սանթիմ
Ժ. ՎՐԷԺ (Պուլկարիաի մէջ Թիւրքերի սրած բարբարոսութիւններէն մի փոքրիկ պատկեր կը ներկայացնէ և ցոյց կուտայ Թէ Պուլկարներն ի՛նչպիսի մի-ջոցների դիմած են իրենց վրէժ լուծելու համար)։ (15 սնթիմ) ,20 սնթմ.
ԺԱ. ԹՈՄԱՍ ԲՈՅԱՐԻՍ (Ծանօթ անուն մէջ Թիւրքերի սրած բարբարոսութիւններէն մի փոքրիկ պատկեր կը ներկայացնէ և ցոյց կուտայ Թէ Ցոյներն ի՛նչպիսի միջոցների դիմած են իրենց վրէժ լուծելու համար), (0,15սանթիմ) ,20 սանթիմ։

ԺԲ
ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ Մ. ՓՈՐԹՈՒԳԱԼԵԱՆԻ

ՆՄՈՅՇՆԵՐ
Մ. ՓՈՐԹՈՒԳԱԼԵԱՆԻ ԳՐԱԾ ՈՏԱՆԱՒՈՐՆԵՐԷՆ

Մ. Փորթուգալեանի գրած հայրենասիրական ոտանաւորներէ մի քանին ամփոփուած են այս տետրակի մէջ իբրեւ նմոյշներ զանազան քաղաքների մէջ և զանազան տպաւորութիւնների տակ իւրաքանչիւր գրած ոտանաւորներին որոնք ժամանակին հրատարակուած չը լինելով կորսուած են այժմ։ Այն մի քանի ոտանաւորները որոնք իրրեւ նմոյշ ամփոփուած են այս տետրակի մէջ, ցիր և ցան կը գտնուին Կ. Պոլիս տըպագրուած աղգային երգ արձանների մէջ՝ որոց վերսան տպագրութիւնն վաղուց արդէն արդիլուած է, և Ասիա և Ամերիկա լրագիրներին մէջ։ Նմոյշներին մէջ փոքրիկ տեղեկութիւններ տըրուած են նաեւ Թէ այդ ոտանաւորներ ի՛նչ տպաւորութիւնների տակ ներշնչուելով գրուած են։ Գին (10 սանթիմ) 15 սանթիմ։

ԻՄ ՀԱՅՐԱՍՊԱՆ ԸՆԿԵՐԸ

(Կ. ՊՕԼՍՈՅ ՀԱՅՈՅ ԿԵԱՆՔԷՆ ԱՌՆՈՒԱԾ ՄԻ ԻՐԱԿԱՆ ՎԷՊ)

ԳՐՒԱԾ ԱՊԼՂԱՔԻՊ

Այս հետաքրքրաշարժ գրուած կը ներկայացնէ ընտանեկան տխուր պատկերներէ մին ուր կը տեսնուի Թէ անբարոյական մի հայր իւր ապականուած վարքուբարքով որչա՛փ չարիքներ պատճառ դարձած է և վերջ ի վերջոյ ինք ալ իւր որդու ձեռքով սպաննուած և անհետացած է աշխարհէ ։ Գինն 1 ֆրանգ, (75 սանթիմ)։

Մ. Փորթուգալեանի հրատարակած գիրքերէն վրայ մասնաւոր զեղչ կը լինի Պարսկաստանի Հայերին համար որոնց կը ղրկուի փոստագծի մէջ նշանակուած գիներով ։

ՀԱՅՈՑ ՀԱՅՐԵՆԱՍԻՐԱՑԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ
Ա ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

ՎԱՐԴԱՊԵՏԱՐԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԶԱՏՈՒԹԵԱՆ

Բ. Տպագրութիւն

«Հայոց Հայրենասիրական Միութեան» հրատարակած այս վարդապետարանի մէջ համառօտ կերպով բացատրուած է Թէ իւրաքանչիւր Հայրենասէր Հայ ի՛նչ փափաքներ պէտք է ունենայ և ի՛նչ պարտքեր ունի կատարելու ։

Կը խնդրուի ամեն հայրենասէր Հայերէ իրենց շրջանի մէջ տարածել այս տետրակ ։ Մէկ անգամէն 50 օրինակ ծախու առնողին կը ղրկուի 5 ֆրանքով։ Հատին գինն է 15 սանթիմ (Պարսկաստանի Հայերին համար 10 սանթիմ)։

ԾԱԽՈՒ ԳԻՐՔԵՐ

ԱԼԻՇԱՆ Հ. Ղ. — Յուշիկք Հայրենեաց Հայոց (Հայրենասիրութեան վրայ չերմ եռանդով գրուած մի նախատանէ յետոյ, Հայաստանի բնախօսութեան վերաբերեալ հմտալից և ընդարձակ տեղեկութիւններ կան գրուած ։ Ապա հետև, Հայոց Պատմութենէն առնուած մի քանի անձերի և հետաքրքրական նիւթերի վրայ առանձին առանձին գրուածներ կան մանրամասն և ընդարձակ տեղեկութիւններով որոնք բազմաթիւ տպագրուած և դեռ անտիպ պատմական գիրքերէ քաղած և ամփոփած է ։ Ալիշան այս գրքի մէջ, իրեն յատուկ գրաւիչ և բանաստեղծական ոճով պատմելով զանոնք ։ Գրուած է աշխարհաբար լեզուով ։ կը բաղկանայ 2 հատորէ և ունի 6 պատկեր) ։ 11 ֆր. ։

Բաֆֆի, Խենթը (Արկածները վերջին ռուս-Թուրքական պատերազմից) և Զալաիտտին (Մի պատկեր նրա արշաւանքից) ։ երկուքը մէկտեղ մէկ հատորի մէջ ամփոփուած։ Բոլոր։ 8ֆր.75սր

Բաֆֆի, Հայ կինը եւ Հայ երիտասարդութիւնը 5 ֆր. 25 սնթմ.։

Բաֆֆի, կայծերի վերջը 1 ֆ. 75սթմ.։

Շարժումն Հայաստանի (L'Arménie en mouvement). Մայր Հայաստանի պատկեր 1 ֆրանգ

Զայնագրեալ երգեցողութիւն Մ. Պատարագի 10 ֆր.

Երգեկեաց, Ազգային երգարան (Զայնագրեալ հայկական նոտաներով) 2 ֆր. 80 սանթիմ

Բաֆֆի, Դաւիթ բէկ պատմական վէպ (1722–1728) Ա, Բ և Գ դիրքերն վերջապանով մէկտեղ մէկ հատորի մէջ ամփոփուած. Բ տիպ։ 10 ֆր. ։

Մերեկց, Թէոդորոս Ռշտունի 3 ֆրնք. 50 սանթիմ

Հ. Առաքելեանց, Պատմութիւն Խաչակրութեանց և Թագաւորութեանն Երուսաղիմայ 2 ֆրանգ

Նիկոլ կամ դարձ Հայոց Եւրոպիոյ ի կաթոլիկութիւն 1 ֆր.

ԳԷՈՐԳ ԱՒՈՎԵԱՆՑ. — Համառօտ պատմութիւն Հայոց ազգի պատմութեան (Բ տիպ. Տփղիս .) 2 ֆր.

Հ. ԹԷՐՁԻՄԱՆԵԱՆ. — Համառօտ պատմութիւն Հայոց (6րդ տիպ. Վենետիկ) . 2 ֆր. 50 սնթմ.

ՏԻԱՐ Ա. Մ. ԲԺԻՇԿԵԱՆՑ
ՅԱՆՁՆԱԿԱՏԱՐ
Մարսիլիա, Պօվօ փողոց, բիւ 18
A. M. Pejischkiantz
rue Beauvau 18. Marseille

ՏՆՕՐԷՆ—ԽՄԲԱԳԻՐ
Մ. ՓՈՐԹՈՒԳԱԼԵԱՆ

Le Gérant : FÉLIX ENFFANTIN.
ՄԱՐՍԷՑԼ
Հայերէն տպարան Մ. Փորթուգալեանի
Marseille. — Imprimerie et Papeterie du Midi, Allées de Meilhan, 44.